ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ
«ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԾԻՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ

Հայաստան, 0025, Երևան, Ալեք Մանուկյան փող., 5 շենք,
Հեռ. (+374)10570830, (+374)10554057 Էլ.հասցե hasarakakan.kartsiq@gmail.com

Արբանյակային հեռուստատեսության և ռադիոյի դերը հայկական սփյուռքում

Երևան 2018

Վերլուծություն

«Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոնը» իրականացրել է սոցիոլոգիական հետազոտություն՝ պարզելու սփյուռքահայ հեռուստադիտողների հեռուստատեսային և ռադիո նախընտրությունները, արբանյակային հեռուստատեսության և ռադիոյի դերը հայկական սփյուռքում, ինչպես նաև Առաջին ալիքի առկա և պոտենցիալ լսարանը: Հետազոտությունն անց է կացվել դեմ առ դեմ հարցումների և էլեկտրոնային հարցումների մեթոդների կիրառությամբ: Դեմ առ դեմ հարցումները անցկացվել են ՀՀ կրթության և գիտության նախարարության կազմակերպած ծրագրերի շրջանակներում Հայաստան ժամանած սփյուռքահայերի հետ: Էլեկտրոնային հարցաթերթերը ուղարկվել են սոցիալական ցանցերի միջոցով, ինչպես նամակների ձևով, այնպես էլ տեղադրվել են հատուկ սփյուռքահայերի համար գործող խմբերում և էջերում: Ընտրանքի ծավալը կազմել է 1500 հարցվող: Հաշվի առնելով հայկական սփյուռքի բազմաշերտությունը՝ հետազոտության արդյունքները տարածելի չեն ողջ սփյուռքի վրա, այլ կիրառելի են սփյուռքի որոշ համայնքների վրա՝ մասնավորապես հարցվողների շրջանի:

Հետազոտության սկզբում փորձել ենք պարզել, թե հարցվածները Հայաստանի մասին տեղեկատվություն ինչ աղբյուրներից են հիմնականում ստանում: Հարցվածները հնարավորություն են ունեցել նշելու մի քանի տարբերակներ, ուստի գծապատկերում նշված տարբերակների տոկոսային հանրագումարը հարյուր չէ:

Ինչպես տեսնում ենք Գծապատկեր 1-ում հայկական արբանյակային հեռուստատեսությունը՝ որպես տեղեկատվության աղբյուր, հանդիպում է դեպքերի 48%-ի մոտ: Նույն տոկոսային ցուցանիշն ունեն նաև Հայաստանում ապրող բարեկամները, ծանոթներն ու ընկերները: Որպես տեղեկատվության աղբյուրներ հաճախ են նշվել նաև հայկական ինտերնետային կայքերը, ֆեյսբուքը, ինչպես նաև իրենց բնակության երկրում ապրող հայերը: Հայկական ռադիոն՝ որպես տեղեկատվության աղբյուր հանդիպում է 5% դեպքերում: Տվյալներն առավել մանրամասն ներկայացված են Գծապատկեր 1-ում:



Գծապատկեր 1. Հայաստանի մասին տեղեկատվություն ստանալու հիմնական աղբյուրները

Անդրադառնալով հայկական արբանյակային հեռուստատեսությանը՝ նշենք, որ ինչպես նախորդ տարին, այս տարի ևս ամենաշատ դիտվող հեռուստաալիքները Արմենիան և Շանթն են՝ համապատասխանաբար 72% և 71%: Արդյունքները՝ Գծապատկեր 2-ում:



Գծապատկեր 2. Որ հեռուստաալիքներն են դիտում (%)

Առաջին ալիքը դիտելիությամբ երրորդ տեղում է: Ասենք նաև, որ 2016թ.-ից ի վեր Առաջին ալիքի դիտելիությունը սփյուռքահայերի շրջանում նվազում է: Դինամիկան ներկայացված է Գծապատկեր 3-ում:



Գծապատկեր 3. Հեռուստաալիքների դիտելիության դինամիկան (%)

Եթե նախկինում Առաջին ալիքը դիտարկվում էր մրցակից հեռուստաալիք Արմենիա և Շանթ ալիքների հետ, բավականին բարձր տոկոսային ցուցանիշ ունենալով Կենտրոնի համեմատությամբ, ապա այսօր Հ1-ը շատ քիչ դիտելիությամբ է տարբերվում Կենտրոնից:

Այն հարցին, թե հիմնականում ինչ տիպի հաղորդումներ են դիտում հայկական արբանյակային հեռուստատեսությամբ, հարցվածների մեծամասնությունը նշել է լրատվական հաղորդումներ՝ 75% և պատմամշակութային հաղորդումներ՝ 70% (Գծապատկեր 4):

Հետաքրքիր է այն հանգամանքը, որ համեմատաբար առավել քիչ տոկոսային ցուցանիշներ ունեցող սերիալներ և սիթքոմներ տարբերակները մանրամասնող հարցի դեպքում առավել հաճախ հանդիպողներն են. հարցին, թե կոնկրետ որ հաղորդումներն են դիտում, հարցվածները նշել են հետևյալ տարբերակները՝

- Ազիզյաններ
- Ֆուլ հաուս
- Քարե դարդ
- Էլենի օրագիրը

- Դոմինո
- Երևի

Ասենք նաև, որ սփյուռքահայ հարցվածների բավականին մեծ զանգված հայկական հեռուստաալիքներով դիտում են նաև հնդկական սերիալներ:



Գծապատկեր 4. Ինչ տիպի հաղորդումներ են դիտում

Հետազոտության քանակական և որակական մեթոդներից ստացված տվյալները ցույց են տալիս, որ հարցման մասնակիցները հիմնականում բավարարված չեն Սփյուռք հեռարձակվող հեռուստաալիքների հաղորդումների բովանդակությամբ և ձևային չափանիշներով:

Մասնակիցները հստակ տարբերակում են հաղորդումները ըստ հեռուստաալիքի, սակայն հայկական հեռուստատեսությունների նկատմամբ վերաբերմունքը ընդհանրական բնույթ է կրում, և տվյալ պարագայում հեռուստաալիքները դիտարկվում են որպես մեկ միավոր:

Ինչ վերաբերում է հայկական ռադիոյին, ապա այն որպես տեղեկատվության աղբյուր սփյուռքահայ հարցվածների շրջանում հանդիպում է միայն 5% դեպքերում: Հետազոտության շրջանակներում առանձին հարցով անդրադարձ է կատարվել Հանրային ռադիոյի լսելիությանը. նշենք, որ արդյունքում պարզ է դարձել, որ Հանրային ռադիո լսում է վերոնշյալ 5% ռադիոլսողների ընդամենը 13%-ը, ինչը

խոսում է այն մասին, որ Հանրային ռադիոն հայկական սփյուռքում կորցրել է իր դերն ու նշանակությունը:

Տվյալները ներկայացված են Գծապատկեր 5-ում:



Գծապատկեր 5. Լսում են արդյոք Հանրային ռադիո

Հայկական մեդիան որոշ առումով հայկական խոսքը (մշակույթը) սփյուռքահայերի ընտանիքում հնչեցնելու լավագույն միջոցն է, սակայն հարցված ծնողները հաճախ խուսափում են մասնավորապես հայկական հեռուստաալիքները առանց վերահսկողության միացրած թողնել, քանի որ չեն վստահում եթերի բովանդակությանը և չեն ցանկանում, որ իրենց երեխաները դիտեն այս կամ այն հաղորդումը կամ սերիալը:

Հարցված սփյուռքահայերի մեծամասնությունը՝ 81%, նշել է, որ ընտանիքում միշտ խոսում է հայերեն (Գծապատկեր 6): Սակայն մանրամասնող հարցերի արդյունքում պարզ է դարձել, որ սփյուռքահայերը հետաքրքրված են լեզու սովորեցնող հաղորդումներով: Հարցման մասնակիցները նշում են, որ հաղորդացանցում անհրաժեշտ է ներառել լեզուն ուսուցանող հաղորդումներ, նաև՝ հայալեզու մուլտֆիլմեր:

Լեզուն և մշակույթը ուսուցանող հաղորդումներից զատ, ըստ սփյուռքահայերի, անհրաժեշտ է ուշադրություն դարձնել լեզվի անաղարտությանը: Այն հաղորդաշարերը և սերիալները, որոնք ցուցադրվում են սփյուռքում, պետք է միայն «մաքուր» հայերենով հնչեն՝ բացառելով փողոցային ժարգոնը, օտար բառերը:



Գծապատկեր 6. Ընտանիքում խոսում են հայերեն, թե ոչ

Ինչպես պարզեցինք հետազոտության արդյունքում, հարցված պատանիների (450 հոգի) մեծամասնությունը՝ 60%-ը, իր պատկերացմամբ գրում, կարդում և հասկանում է հայերեն, 31%-ը խոսում, սակայն դժվարանում է կարդալ կամ գրել: Հարցված պատանիների ընդամենը 2%-ն է նշել, որ չի խոսում հայերեն: Նշենք նաև, որ հարցվածները տարբեր տարիներին տարբեր ծրագրերով Հայաստան ժամանածներն են, ովքեր առավել ակտիվ են համայնքում: Հայերենի իմացության մակարդակի վերաբերյալ տվյալները Գծապատկեր 7-ում են:



Գծապատկեր 7. Հայերենի իմացության մակարդակը

Հարցին, թե որտեղ են սովորել հայերեն, հարցված պատանիների մեծամասնությունը նշել է ընտանիքում՝ ծնողներից տարբերակը: Երկրորդ առավել հաճախ հանդիպող տարբերակը կիրակնօրյա կամ մեկօրյա դպրոցներն են (Գծապատկեր 8):



Գծապատկեր 8. Որտեղ են սովորել/սովորում հայերեն

Ընտանիքներում հայոց լեզվի պահպանումը թեև կրում է անհատականացված բնույթ, և կախված ընտանիքից՝ փոփոխվում է նաև իրավիճակը, սակայն կան որոշակի օրինաչափություններ, ընդհանուր դրույթներ, որոնք հանդիպում են դեպքերի մեծամասնությունում: Ընտանիքներում հայերեն խոսելը պայմանավորված է լեզվի պահպանման նկատմամբ հետաքրքրվածությամբ, ցանկությամբ, ընտանիքում (ծնողների, մեծահասակների) լեզվի իմացությամբ:

Այս առումով զգալի է հայկական մեդիայի դերը, ուստի շատ կարևոր է հայկական մեդիայի գործունեությունը ուղղորդել հայոց լեզվի և պատմության տարածման, պահպանման հետ կապված մեկ միասնական ռազմավարության մշակմանը: